

2020 – 2021 ուսումնական տարվա մայրենիի ֆլեշմոբի առաջադրանքները կազմել են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 2-3-րդ դասարանների դասվարները, փաթեթը հավաքել է «Իմացումի հրճվանք» 2-3-րդ դասարանների ղեկավարների լաբորատորիայի ղեկավար Մանուշակ Աբրահամյանը: Այն նախատեսված է 2-3-րդ դասարանների սովորողների համար: Փաթեթը փորձարկվել է՝ կրթահամալիրում իրականացվող ամենամսյա ֆլեշմոբերի միջոցով:

ՄԱՅՐԵՆԻԻ ՖԼԵՇՄՈԲ 2-3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ,

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մեպտեմբեր 2020

1. Կռահի՛ր նկարելուկը՝ առաջին բառից ընտրելով 1-ին տառը, 2-րդ բառից՝ 2-րդ տառը, 3-րդ բառից՝ 3-րդ տառը, 4-րդ բառից՝ 4-րդ տառը:



2. Նշի՛ր «ավելորդ» բառը:

- Բզեզ
- Ջատիկ
- Մեղրու
- Թիթեռ
- Կաչաղակ

3. Կռահի՛ր օրինաչափությունը և գրի՛ր պակասող բառերը:

Մեքենա - մեղու

Ջանգակ – զատիկ

Ճահիճ – ճանճ

Թիվ –

Մողես –

4. Գրի՛ր մեկ բառով:

Մեղու պահող –

Աշխատանք սիրող –

Մեղուների խումբ –

Մեղվի բույնը –

5. Գուշակի՛ր հանելուկը:

Ամբողջ օրը քուն չունի,

Լայն դաշտերում տուն չունի,

Ծաղկից ծաղիկ է թռչում,

Փեթակ ունի, բուն չունի:

6. Մեղվի կամ մեղրի մասին մի հանելուկ էլ դու հորինի՛ր:

7. Բանաստեղծության տողերը ճիշտ հերթականությամբ դասավորի՛ր:

Ու ոտքերով թավամագ,

Պզզան, պզզան, պզպզան,

Բարձր սարեր կթռչես,

Պստիկ մեղու տգտրզան,

Փռչի առած՝ տուն կգաս:

Դաշտ ու հովիտ կշրջես,

Սուսան սմբուլ կծծես,

8. Բառերը թարս (աջից ձախ) կարդա՛ և գրի՛ր ստացված ասացվածքները:

րդեՄ ըղոխած ըտամ իտսպլկ:

նյուՆ ցիկղած ըձօ նյութ է մունիշ, նուղեմ՝ ըղեմ:

9. Հորինի՛ր պատմություն «Օլվլան մեղուն» վերնագրով:

10. Մեղվի կամ մեղրի մասին 3 փաստ առանձնացրո՛ւ, ձայնագրի՛ր կամ տեսագրի՛ր:

Նյութը հրապարակի՛ր youtube-ում կամ soundcloud-ում, իսկ հղումն ուղարկի՛ր պատասխանի փոխարեն: (Եթե արդեն ունես այդպիսի աշխատանք, կցի՛ր աշխատանքիդ հղումը):

Հոկտեմբեր 2020

1. Տառերը խառնվել են, դասավորի՛ր և գրի՛ր բառերը:

շունա, իքամ, կաձնր, տիբոեմերկ, առձ

2. Նախորդ բառի մեկ տառը փոխելով նոր բառեր կազմի՛ր. (Օրինակ՝ թաց-հաց-հավ-կավ):

ծառ –

լոր –

3. Բառերն առանձնացրո՛ւ և գրի՛ր ստացված ասացվածքը:

Ջուրնընկնողը անձրևից չի վախենա:

Ինչլինի մարդուն իր խելքից:

4. Գտի՛ր յուրաքանչյուր բառաշարքի ավելորդ բառը:

Կայծակ, ամպրոպ, տերև, փոթորիկ

Դդում, տանձ, խնձոր, խաղող

Հոկտեմբեր, մարտ, սեպտեմբեր, նոյեմբեր

5. Կռահի՛ր կենդանուն և նախադասության բացը լրացրո՛ւ:

Դաշտում խնջույքի ժամանակ Կոմիտասը մի օր լսում է և անմիջապես մի թղթի կտոր է վերցնում և սկսում է ձայնագրել. ապա հանդիմանում է կենդանուն, թե «Այ ապուշ, սխալ ես գոում, գռալ էլ չգիտես. . . »

6. Գտի՛ր բանաստեղծության վերնագիրը և հեղինակին:

Ծառեր, թփեր, լեցուն միրգ

Մառան տարան գիրկ ոու գիրկ,

Աշուն սնավ...

7. Կոմիտասյան երկու երգ խառնվել են: Ճի՛շտ դասավորի՛ր ու գրի՛ր երգերի անվանումները:

Վարդավառը գալիս ա,

Գարնան սիրուն ծաղիկ ես,

Սունա յար, Սունա յար,

Հո՛յ Նազան իմ, Նազան իմ

Ծաղիկը ցնծալիս ա,
Ինձ համար աղունիկ ես,
Սոնա սիրուն, Սոնա յար:
Ջա՛ն, Նազան իմ, Նազան իմ:

8. Ի՞նչ ես կարծում Կոմիտասը իր աշակերտներին հաճախ կոչում էր.

Սորելիսիկներ, Սողեսիկներ, թե՛ մրջյունիկներ: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

9. Գրի՛ր տրված արտահայտությունները մեկ բառով:

Ծնկի բերել –
Ձեռք բերել –
Վիզը ծռել –
Ձայնը կտրել –
Ականջ դնել –
Կրակի գին –

10. Շարունակի՛ր և երեք-չորս նախադասությամբ ավարտի՛ր պատմությունը:
Կար-չկար մի ճամփորդ տերև կար. . .

Նոյեմբեր 2020

1. Գուշակի՛ր, թե ո՞ր ստեղծագործությունից են բառերը է և ո՞վ է հեղինակը:

Սով, մկստան, ջոջեր, ցեղակից, մոռան, ցեղ, զանգ, ծլնգոց, ճստճստան, ճառ, պոչ:

2. Բանաստեղծության տողերը խառնվել են, դասավորի՛ր.

Աքաղաղն ու կտուրը

Աթաբեկ Խնկոյան

Կարմրապեծիկ

Մի աքաղաղ

Երկար ու ձիգ

Իր ոտքերը
Կտրին տալով՝
Վեր-վեր ձգվեց,
Ի՞նչ հարց տվեց,
Ու զարմանքով . .

- Ես զոռ տալիս,
Էս ո՞նց է, որ
Փուլ չի գալիս:

Էս կտուրը

3. Տրված բառերին աջից կամ ձախից ավելացրո՛ւ մեկ տառ և ստացի՛ր նոր բառեր:

Երթ, անել, շուն, ստել, ութ, արագ, բարի, մուր:

4. Առածներից որոշ բառեր «փախել են» են, փորձի՛ր գտնել և տեղադրել:

Շատ ————— , շատ բան կիմանաս:

Ինչ-որ ————— , այն կհնձես:

Լույսը կբացվի, ————— հետը:

Կարմիր ————— կաշին չի փոխի:

Հասկացողին ————— ասա, չհասկացողին՝ ————— :

Մի ————— գարուն չի գա:

Ով ————— , ոչ դալարի:

5. Այստեղ թաքնվել է մի «համեղ տոն», փորձի՛ր գուշակել:

- 1) Ի՞նչ կդառնա բանջարեղենը, եթե լցնենք աղաջրի մեջ:
- 2) ...-ը քար է ծակում:
- 3) Թումանյանի հեքիաթներից՝ «Սևուկ ...-ը»

4) Նարնջագույն է, նարինջ չէ,
Կլոր է, բայց ձմերուկ չէ,
Բանջարեղեն է, բայց գազար չէ:

5) Ի՞նչն է ջրում դաշտ ու անտառ՝

Լինի գարուն, աշուն, ամառ:

6) Գտի՛ր իմաստով մոտ բառ՝ երեկո կամ...

7) Ի՞նչ մտրակ է՝

Փայլում-շողում

Պոչը ամպում,

Ծայրը՝ հողում:

1.	■	■	■	■	■	□	□	■	■	■
2.	■	■	□	□	■	□	□	■	■	■
3.	■	■	■	■	■	□	□	□	□	■
4.	■	■	■	■	■	□	□	□	■	■
5.	■	□	□	□	■	□	■	■	■	■
6.	■	■	□	□	■	□	□	□	■	■
7.	■	■	■	■	■	□	□	□	□	□

6. Օգտվելով բառաշարքից՝ «ծիծաղելի» բառեր կազմի՛ր:

բզեզ թաթիկ

ընձուղտ լոլիկ

տուն թթու

7. Միացնելով Ա և Բ շարքի բառերը՝ ստացի՛ր նոր բառեր:

Ա.	Բ.
տերև	հավաքել
ծաղիկ	փունջ
բերք	թափվել

8. Ամեն անգամ մի տառ փոխելով՝ ստացի՛ր նոր բառ.

Մութ – թութ – թուր - ...

9. Շարունակի՛ր հորինուկը: Չմոռանա՛ս վերնագրել:

Մի անգամ լուրջ ու ծաղկակաղամբը գնացին ճամփորդության: Գնացին, գնացին, մին էլ տեսան . . .

10. Արտասանի՛ր մի բանաստեղծություն աշնան մասին:

Տեսանյութ(ռադիոնյութ) պատրաստի՛ր մեծահասակների օգնությամբ, տեղադրի՛ր YouTube-ում և հղումը դի՛ր պատասխանի դաշտում:

Դեկտեմբեր 2020

1. Կռահի՛ր նկարելուկը՝ 1-ին նկարի՝ 1-ին, 2-րդ նկարի՝ 2-րդ, 3-րդ նկարի՝ 3-րդ, 4-րդ նկարի՝ 4-րդ, իսկ 5-րդ նկարի՝ 5-րդ հնչյունների օգնությամբ:



2. Լսի՛ր ամանորյա [էրգն](#) ու լրացրու պակասող բառերը:

Բասեն —, Բասեն —,

Հա՛յ —, ջա՛ն —,

Տղա՛, —, բո՛նե, —,

Հա՛յ —, ջա՛ն —, —:

3. Գուշակի՛ր հանելուկները:

Ձմռանը ամենուր եմ,
Ձեր սիրելի հյուրն եմ,
Մեծի համար պաղ եմ,
Մանուկների խաղ եմ:

Ճերմակ է, շաքար չի,
Կարծր է, բայց քար չի,
Հենց տաքացավ, կհալչի:

4. Ձմռան մասին մի հանելուկ էլ դո՛ւ հորինիր □

5. Բառերը թարս (աջից ձախ) կարդա՛ և գրի՛ր ստացված ամանորյա բարեմաղթանքները:

տառա իրատ, ըքրեք՝ իրաբ:

ավոամա շուփ՝ ավոեմձ շուն:

6. Տառերը խառնվել են, դասավորի՛ր և գրի՛ր բառերը. յուձն, դմրաենձ, թափլի, ուցրտ, սույռաց, կետդեմերբ, ոձցոեն

7. Հովհաննես Թումանյանի «Առաջին ձյունը» բանաստեղծության տողերը ճիշտ հերթականությամբ դասավորի՛ր:

Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս,

Թիթեռ է գալի...

Ինչքան սպիտակ

Էսքան շատ թիթեռ

Բակն ու դուռը լի

Չեմ տեսել ես դեռ:

8. Նշի՛ր ձմռան ամիսները:

- Դեկտեմբեր
- Մայիս
- Հունվար
- Փետրվար

9. Ընթերցի՛ր կամ բերանացի ասա ձմռան մասին քո սիրելի բանաստեղծություններից որևէ մեկը: Խնդրի՛ր մեծահասակներից մեկին տեսագրել քեզ, նյութը տեղադրի՛ր Youtube-ում և հղումն ուղարկի՛ր պատասխանի փոխարեն:

10. Հորինի՛ր պատմություն՝ շարունակելով անավարտ միտքը: Չմոռանա՛ս նաև վերնագրել:

Մի անգամ երկնքից թափվող փաթիլը մոլորվեց ու. . . .

Հունվար 2021

1. Բառերը քանդվել են, կարո՞ղ ես հավաքել:

անուշ, ձյուն, ծառ, մարդ, ա, տոն, սահ, սա, նակ, ռույց, ձևե

2. Բանաստեղծության տողերը խճճվել են, օգնի՛ր դասավորել:

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին,
Զգույժ իջի՛ր դաշտերին:

3. Մեկ բառ դարձրու .

- փոքրիկ մարդ -
- փոքրիկ աղջիկ -
- փոքրիկ տուն -
- փոքրիկ շուն -
- փոքրիկ թռչուն -

4. Գուշակի՛ր հանելուկները:

Ա. Յրտից ծնված թիթեռ եմ,
Թե ջերմացնես, կհալչեմ:

Բ . Բազմած սառցե սահնակին՝
Տարին մեկ հյուր է գալիս,
Բերք ու բարիք շալակին՝
Բոլորիս տուն է գալիս:

5. Բանաստեղծության շարունակությունը Ձյունանուշը մոռացել է, օգնի՛ր նրան հիշել: Բանաստեղծությունը ներկայացո՛ւ տեսանյութի կամ ռադիոնյութի տեսքով:

Արի՛, արի՛

Ձմեռ պապի...

6. Գտի՛ր օրինաչափությունը և գրի՛ր կրկնվող բառը:

ձնագնդիկ

ձնեմարդ

ձյունանուշիկ

ձնաբուք

ձյունամրրիկ

7. Ամեն անգամ նախորդ բառի մի տառը փոխելով՝ նոր բառեր ստացիր.

տառ - ... - ... - ...

8. Լրացրո՛ւ բաց թողնված բառը.

Ձյունանուշը է:

Ձմեռը է:

Քամին է:

Փաթիլները են:

9. Ի՞նչ կլիներ.

1) Եթե ձմռանը փաթիլների փոխարեն կոնֆետներ թափվեին երկնքից, . . .

2) Եթե փաթիլները գունավոր լինեին, . . .

3) Եթե Ձմեռ պապը նվերներ բաժանելու փոխարեն նվերներ վերցներ, . . .

10. Պատմի՛ր, թե ինչ պատահեց Ձմեռ պապիկին, երբ Ամանորի գիշերը հանկարծակի անհետացավ նրա նվերների պարկը:

Փետրվար 2021

1. Գուշակի՛ր Հովհաննես Թումանյանի ո՞ր հեքիաթներից են այս հատվածները:

- 1) Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը՝ մարդուն, ու միշտ կռվելիս են լինում: Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:
- 2) Մերն աղջկանը գովելով ման է գալի. «Լիդրը գգող, լիդրը մանող, հա՛մ խճճող, հա՛մ խճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները՝ ոսկի»:
- 3) Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս: Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի:

2. Հովհաննես Թումանյանի «Կռունկներ» բանաստեղծության տողերը ճիշտ հերթականությամբ դասավորի՛ր:

Եկավ գարուն մեր դռան:

Կը՛ռ կը՛ռ, կըռկըռան.

Կռունկների թևի տակ

Կռունկները հա՛ թռան.

3. Բառերը շրջվել են, կարդա՛ աջից ձախ և գրի՛ր թումանյանական հեքիաթների վերնագրերը:

ըսեվղա տաչո՞ղ, նիռու՛չ նաբնՍ, սոնաՓ դրոխա՛Ձ, ըկուձ դոսոխ, ըտի՛Ծ

4. Գրի՛ր մեկ բառով:

Սուտ ասել -

կռիվ անել -

կատակ անել -

հարց տալ -

մութն ընկնել -

5. Հորինի՛ր այնպիսի սուտ, որ ասենք սուտ է:

6. Ընտրի՛ր վերնագրերից մեկը և հորինի՛ր փոքրիկ պատմություն:

«Ձախորդ Հուռին», «Անխելք աքլորը», «Անհաղթ հիմարը»:

7. Վերնագրերից ո՞րը Հ. Թումանյանի ստեղծագործություններից չէ:

«Կանանչ ախպեր», «Պույ-պույ մկնիկը», «Մուկիկի մահը», «Իրիկուն», «Արագիլը»:

8. Բառերն առանձնացրո՛ւ և կարդա ասացվածքները:

Սուտասողիտունըկրակընկավչհավատացին:

Գյուղըորկանգնիգերանկկոտրի:

9. Գիտե՞ս, որ փետրվարի 19-ին Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է: Այդ առիթով շնորհավորի՛ր նրան: Այս տարի նրա 152 ամյակն է:

10. Ընթերցի՛ր կամ բերանացի ասա՛ Հովհաննես Թումանյանի քո սիրելի բանաստեղծություններից որևէ մեկը: Խնդրի՛ր մեծահասակներից մեկին տեսագրել քեզ, նյութը տեղադրի՛ր Youtube-ում և հղումն ուղարկի՛ր պատասխանի փոխարեն:

Մարտ 2021

1. Լուծի՛ր խաչքառը և ներկված հատվածում կկարդաս սիրելի անվանում:

		1.			
	2.				
3.					
	4.				
5.					
6.					

- 1) «Ա՛խ, էսպես էլ գիժ ամիս,
Մարդու հանգիստ չի տալիս»:
- 2) Ո՛չ ամառ է, ո՛չ ձմեռ է, և ո՛չ էլ աշուն է:
- 3) Պապիկ-տատիկ, հայրիկ-մայրիկ, եղբայր-...
- 4) Արփի-արեգակ-....:
- 5) Տարին ունի 12 ...:
- 6) «Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը՝ ...»:

2. Գտի՛ր կրկնվող բառը:

մայրական

մայրենի

մայրություն

մայրիկ

մայրաքաղաք

3. Հորինի՛ր փոքրիկ պատմություն, թե ինչից է պատրաստված մայրիկը:

4. Լրացրո՛ւ քեզ ծանոթ բանաստեղծության բաց թողնված բառերը:

Ա՛խ, էսպես էլ ամիս

Մարդու չի տալիս:

Էսօր ... օր կանի,

Վաղը՝ ու քամի:

Առավոտը օդ:

Կեսօրին ու ամպոտ:

5. Յուրաքանչյուր շարքից ընտրի՛ր մեկական բառ և կազմի՛ր նոր բառ:

ձյուն հոտ

մայրիկ ծաղիկ

անուշ թերթ

ծաղիկ տոն

բազում երանգ

6. Շարունակի՛ր `ի՞նչ կլիներ, եթե:

Ի՞նչ կլիներ, եթե ծաղիկները ծաղկեին հողի տակ:

Ի՞նչ կլիներ, եթե միշտ գարուն լիներ:

7. Թումանյանական բանաստեղծությունների խառնաշփոթ է: Օգնի՛ր տողերը դասավորել ըստ հերթականության և նշի՛ր բանաստեղծությունների վերնագրերը:

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ,

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ,

Առատ ու անփույթ,

Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,

Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,

Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ,

Կեղևը՝ կապույտ:


Մի շատ անհանգիստ տղա էր ապրում:

8. Տրված վանկերին այնպիսի վանկեր ավելացրո՛ւ, որ բառեր ստանաս: Գրի՛ր այդ բառերը:

-նըր, -գըր, -տըղ, -կըղ:

9. Մայրիկների տոնի առթիվ արտասանի՛ր սիրելի բանաստեղծությունը կամ երգի՛ր քո սիրելի երգը զարնան մասին և նվիրի՛ր մայրիկիդ: Պատրաստի՛ր տեսանյութ, հրապարակիր You Tube –ում, հղումն ուղարկի՛ր:

10. Վերնագրի՛ր նկարը: Ո՞ր հեքիաթն է հիշեցնում: Կռահեցի՞ր, գրի՛ր ՝ ով է հեղինակը:



Ապրիլ 2021

1. Ամեն անգամ նախորդ բառի մի տառը փոխելով՝ ստացի՛ր:
ա) ձի-ից՝ լու, բ) տառ-ից՝ նուռ, գ) հող-ից՝ փիղ, դ) կով-ից՝ նավ:

2. Գտի՛ր «թաքնված» ասացվածքները:
ա) Ուշիհիննուշիհինի: բ) Դուքեզմիգովիրթողուրիշըգովի:

3. Ո՞ր շարքում են կենդանիները դասավորված «Ոհմակ, պարս, նախիր, երամակ, վտառ» խմբին համապատասխան:

Ա. գայլ, մեղու, ձի, կով, ձուկ:

Բ. գայլ, մեղու, կով, ձի, ձուկ

Գ. մեղու, կով, ձի, գայլ, ձուկ

Դ. մեղու, գայլ, ձուկ, կով, ձի

4. Գտի՛ր քեզ ծանոթ տողերի կորած բառը և լրացրո՛ւ կետերի փոխարեն:

Պզզան, պզզան, պզպզան, պստիկ . . . տզտզան:

Մի . . . կարմրապեծիկ, իր ոտները երկար ու ձիգ:

. . . դուրս է եկել պսպղալով:

. . . , . . . , իմ կաթնատամ, գնա՛ս բարով, հարյուր տարով:

5. Աջից կամ ձախից հանի՛ր մեկ տառ և ստացի՛ր նոր բառեր:

Նվարդ, կուժ, որդի, աշուն, ժավել

6. Մեկ բառով գրի՛ր:

Ոսկուց պատրաստված-

Քարից պատրաստված-

Երկաթից պատրաստված-

Արծաթից պատրաստված-

Փայտից պատրաստված-

7. Կարդա՛ Ջ. Ռոդարիի «Այ քեզ շաբաթ» բանաստեղծությունը: Փոխի՛ր ընդգծված բառերն այնպես, որ ծույլը դառնա աշխատասեր:

Արթնացա երկուշաբթի,

Հորանջեցի երեքշաբթի,

Չորեքշաբթի անուշ-անուշ ձգվեցի,

Հինգշաբթի կրկին քնեցի:

Քնեցի ուրբաթ, շաբաթ

Ու գործի չգնացի`

Կորչի գործը- ասացի:

Լավ էր՝ արդեն կիրակի

Ամբողջ օրը քնեցի:

8. Չարաճճի բառերի տառերը խառնվել են, դասավորի՛ր այնպես, որ կարդաս բառը:

տիզակ, դմուե, ճճնա, ջմուրյն, ոթիեթ

9. Շարունակի՛ր հորինել:

Մի անգամ շուտասելուկը դուրս թռավ գրքից և ընկավ. . .

10. Փորձի՛ր արագ կարդալ հետևյալ շուտասելուկները: Ձայնագրի՛ր կամ տեսանկարահան՛իր քեզ, տեղադրի՛ր հղումը: Կարող ես ինքդ ընտրել շուտասելուկ համացանցից: Խաղին կարող են մասնակցել նաև ընտանիքիդ անդամները:

Բուռ-բուռ այլուր շաղեցինք,
Փուռը տարանք եփեցինք,
Փռապանը համեմեց,
Բուռ-բուռ ցորեն նվիրեց:

Շահը շահին ասաց՝ շահ,
Կլինի՞ շահը անշահ:
Շահը՝ անշահ՞հ, շահն ասաց,
Թե անշահ է՝ էլ ի՞նչ շահ:

Ծտի ճուտը՝ ճմբան ծերին, ծտի ճտի ճիտը՝ ծուռ:

Սարի ուսին սիրուն լուսին, սիրուն լուսին սարի ուսին:

Մայիս 2021

1. Տառերը խառնվել են, դասավորի՛ր և գրի՛ր բառերը. ճիկավ, կիծաղ, սիյամ, բուզան, դիծած,
2. Տրված բառերից առանձնացրո՛ւ մեկ բառ, որին առջևից ավելացնես «Գ» տառը կդառնա բնակավայր, «Շ» տառը ավելացնես, կդառնա տատիկի ձեռքի գործիք, իսկ եթե «Ճ» տառը ավելացնես՝ կդառնա ծառի մաս: ավան, կատու, տատիկ, կոշիկ, յուղ, մածուն
3. Մայիսին նշվում է Համբարձման տոնը: Ուրիշ ինչպե՞ս են անվանում այդ տոնը:
4. Ղ.Աղայանի բանաստեղծության մեջ բառերը խառնվել են, դասավորի՛ր և նշի՛ր՝ ո՞ր բանաստեղծությունից է հատվածը:
Մարտը տալիս է մանուշակ,
Ապրիլը՝ կապույտ ձնձաղիկ,
Մայիսին երգում է վարդը,
Սոխակը բացվում անուշակ:

5. **Ծաղկանունները դասավորի՛ր այբբենական կարգով:** Արևածաղիկ, ձնծաղիկ, յասաման, մանուշակ, կակաչ, հասմիկ, զանգակ, շուշան, վարդ, նարգիզ:
6. **Շարունակի՛ր պատմությունը:** Դաշտերում՝ ուր ապրում էին գույզգույն ծաղիկները, որտեղ ծաղկից ծաղիկ էին թռչում ժրաջան մեղուները, բոլոր ծաղիկներն իրար նման էին: Բայց մի ծաղիկ կար, որը տարբերվում էր մյուսներից: Նա. . .
7. **Հնում հավատում էին, որ տարին մեկ անգամ, Համբարձման գիշերը, հենց դրանք էին գալիս ու միանում իրար, ողջագուրվում ու հեռանում:** Լրացրո՛ւ խաչքառը և դեղինով ներկված տողը կարդալով կիմանաս, թե ինչէ՞րն էին:

- 1) Համբարձման ծեսին նախորդող ամսանունն էր. . . ,
- 2) Ճամփորդները հեքիաթում կտուրը բարձրանալուց հետո ի՞նչն էր խանգարում արթնոթին, որ տեսներ, թե աշխարհում ի՞նչ կար, ի՞նչ չկար/պատասխան. սար/
- 3) Հիշում ես, թե ի՞նչն էր շինել Վարպետ Օհանը:
- 4) Քո սիրելի երգերից մեկի՝ «Արև, արև, ե՛կ, ե՛կ » երգի հեղինակի ազգանունը Աղայան է, իսկ անո՞ւնը:
- 5) Երբ աչքերդ փակում ես և խոր քունը մտնում, ի՞նչ ես տեսնում:
- 6) Այդ ինչէ՞րն են, որ իրար միանալով ժամերն են դառնում:

Հունիս 2021

1. **Այբբենական կարգով դասավորելու դեպքում, ո՞ր թռչունը կլինի չորրորդը:**
Ագռավ, լոբ, կաքավ, սագ, հավ, բազե, ճնճղուկ:
2. **Բառերն առանձնացրո՛ւ և նախադասությունները մուտքագրի՛ր:**
Ագռավիճուտը իրմոր համար քաղցր է:
Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է:
Գիտուն աղվեսը երկու տարբով է թակարդը նկնում:
3. **Գուշակի՛ր հանելուկը.**

Ուրիշի բնում նա ձու է դնում,
Ոչ թուխս է նստում, ոչ էլ ճուտ հանում,
Սրան-նրան է ձվերը թողնում
Ի՞նչ թռչուն է նա, ինչպե՞ս են կոչում:

4. Ի՞նչ թռչուններ են «թաքնված» տրված բառերում:

Կարապետ, սալոր, բուրդ, Կաքավասար, Ծիծեռնակաբերդ:

5. Ի՞նչն է կամ ո՞վ է աշխարհում ամենածիծաղելին, շարունակի՛ր:

Աշխարհում ամենածիծաղելին . . .

6. Լսի՛ր «[Կարավիկ երգը](#)» և մուտքագրի՛ր բաց թողնված բառերը:

Արև բացվեց թուխ ամպերեն,

. . . թըռավ կանաչ սարեն,

Կանաչ սարեն՝ սարի ծերեն,

. . . բերավ ծաղիկներեն:

Քո բուն հյուսած ծաղիկներով

Շուշան, . . . , նունուֆարով,

Քո տեղ լըցված ցող ու շաղով,

Քընես-կելնես . . . ու տաղով:

Քո թև փափուկ ու . . . ,

Պստիկ կտուց, կարմիր . . . :

Կարմիր, . . . տոտիկներով,

Կշորորաս ճուտիկներով:

7. Ընտրի՛ր Կոմիտասի երգերից ամենասիրելին և երգի՛ր: Ընտանիքի անդամների օգնությամբ ձայնագրի՛ր կամ տեսագրի՛ր այն, տեղադրիր Youtube-ում և հղումն ուղարկի՛ր պատասխանի փոխարեն:

Հուլիս 2021

1. Արձակուրդի ընթացքում ընթերցած գրքերից կամ ստեղծագործություններից մեկը խորհուրդ տուր ընկերներիդ և տեսանյութի ներկայացրո՛ւ հետևյալ ուղղություններով. 1) Ավարտե՛լ ես գրքի ընթերցումը, թե՞ ոչ: 2) Գիրքը կամ պատմությունը քեզ դո՞ւր եկավ: 3) Ինչպե՞ս կներկայացնես այս գիրքը կամ պատմությունը, որ քո ընկերներն էլ ցանկանան կարդալ:
2. Արձակուրդի ընթացքում ճամփորդե՞լ ես, կամ պատրասվո՞ւմ ես ճամփորդելու: Պատրաստի՛ր տեսանյութ քո գնացած ամենատպավորիչ վայրի մասին կամ այն վայրի մասին, որտեղ նախատեսել ես ճամփորդել՝ 1) ներկայացրու տեղանքը, 2) ու՞մ հետ էիր ճամփորդում/ուզում ճամփորդել, 3) ի՞նչ գիտես այդ վայրի մասին:
3. Պատմի՛ր քո բակի, ընկերների, տանն անցկացրած հետաքրքիր ժամանակի մասին: Ի՞նչ խաղեր եք սիրում բակում խաղալ: Պատրաստի՛ր փոքրիկ տեսանյութ և YouTube-յան հղումը տեղադրի՛ր:

Օգոստոս 2021

Կարդա՛ Սասրիդ Լինդգրենի «[Մանչուկն ու Կառլսոնը](#)» կամ լսի՛ր [աուդիոտարբերակը](#) և պատասխանի՛ր հարցերին:

1. Ո՞վ էր ստեղծագործության հեղինակը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:
 - Ջաննի Ռոդարին
 - Սասրիդ Լինդգրենը
 - Ղազարոս Աղայանը
2. Ո՞ր քաղաքում էր ապրում Մանչուկը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:
 - Երևանում
 - Մոսկվայում
 - Ստոկհոլմում
3. Որտե՞ղ էր գտնվում Կառլսոնի տնակը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:
 - առանձնատան բակում
 - շենքի տանիքում
 - գյուղում
4. Քանի՞ մոմ կար Մանչուկի ծննդյան տոբթի վրա: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- ութ
- յոթ
- վեց

5. Ովքե՞ր էին Մանչուկի քույրն ու եղբայրը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- Գունիլլան ու Քրիստերը
- Հենզելն ու Գրետելը
- Բոսսեն և Բետանը

6. Պատմի՛ր ծննդյանդ տարեդարձին ստացած ամենահետաքրքիր նվերի մասին:

7. Պատմի՛ր ընկերոջդ մասին, նրա հետ անցկացրած հետաքրքիր ժամանակի մասին: Ի՞նչ խաղեր եք սիրում խաղալ միասին: Պատրաստի՛ր փոքրիկ տեսանյութ և YouTube-յան հղումը տեղադրի՛ր:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սեպտեմբեր 2020

1. Կռահի՛ր նկարելուկը՝ առաջին բառից ընտրելով 1-ին տառը, 2-րդ բառից՝ 2-րդ տառը, 3-րդ բառից՝ 3-րդ տառը, 4-րդ բառից՝ 4-րդ տառը:



Պատասխան՝ Մեղու

2. Նշի՛ր «ավելորդ» բառը:

- Բզեզ
- Զատիկ
- Մեղոու
- Թիթեռ
- Կաչաղակ

Պատասխան՝ Կաչաղակ

3. Կռահի՛ր օրինաչափությունը և գրի՛ր պակասող բառերը:

Մեքենա - մեղու
Զանգակ – գատիկ
Ճահիճ – ճանճ
Թիվ –
Մողես –

Պատասխան՝ թիթեռ, մոծակ

4. Գրի՛ր մեկ բառով:

Մեղու պահող –
Աշխատանք սիրող –
Մեղուների խումբ –
Մեղվի բույնը –

Պատասխան՝ մեղվապահ, աշխատասեր, պարս, փեթակ

5. Գուշակի՛ր հանելուկը:

Ամբողջ օրը քուն չունի,
Լայն դաշտերում տուն չունի,
Ծաղկից ծաղիկ է թռչում,
Փեթակ ունի, բուն չունի:

Պատասխան՝ Մեղու

6. Մեղվի կամ մեղրի մասին մի հանելուկ էլ դու հորինի՛ր:

7. Բանաստեղծության տողերը ճիշտ հերթականությամբ դասավորի՛ր:

Ու ոտքերով թավամազ,
Պզզան, պզզան, պզպզան,
Բարձր սարեր կթռչես,
Պստիկ մեղու տգտրզան,
Փռշի առած՝ տուն կգաս:
Դաշտ ու հովիտ կշրջես,
Սուսան սմբուլ կծծես,

Պատասխան՝

*Ոզզան, պզզան, պզպզան,
Պստիկ մեղու տզտրզան,
Դաշտ ու հովիտ կշրջես,
Բարձր սարեր կթռչես,
Սուսան սմբուլ կծծես,
Ու ոտքերով թավամագ,
Փռշի առած՝ տուն կգաս:*

8. Բառերը թարս (աջից ձախ) կարդա՝ և գրի՝ր ստացված ասացվածքները:

րդեՄ ըղոխած ըտամ իտսպլկ:

նյուՆ ցիկղած ըձօ նյութ է մունիշ, նուղեմ՝ րղեմ:

Պատասխան՝

Մեղր ծախողը մատը կլպստի:

Նույն ծաղկից օձը թույն է շինում, մեղուն՝ մեղր:

9. Հորինի՝ր պատմություն «Ծլվլան մեղուն» վերնագրով:

10. Մեղվի կամ մեղրի մասին 3 փաստ առանձնացրո՛ւ, ձայնագրի՝ր կամ տեսագրի՝ր: Նյութը հրապարակի՝ր youtube-ում կամ soundcloud-ում, իսկ հղումն ուղարկի՝ր պատասխանի փոխարեն: (Եթե արդեն ունես այդպիսի աշխատանք, կցի՝ր աշխատանքիդ հղումը):

Հոկտեմբեր 2020

1. Տառերը խառնվել են, դասավորի՝ր և գրի՝ր բառերը:

շունա, իքամ, կաձնր, տհրոեմերկ, առծ

Պատասխան՝ աշուն, քամի, անձրև, հոկտեմբեր, ծառ

2. Նախորդ բառի մեկ տառը փոխելով նոր բառեր կազմի՛ր. (Օրինակ՝ թաց-հաց-հավ-կավ):

ծառ –

լոր –

3. Բառերն առանձնացրո՛ւ և գրի՝ր ստացված ասացվածքը:

Ջուրնընկնողը անձրևից չի վախենա:

Ինչ լինի մարդուն իր խելքից:

Պատասխան՝

Ջուրն ընկնողը անձրևից չի վախենա:

Ինչ լինի մարդուն իր խելքից է:

4. Գտի՛ր յուրաքանչյուր բառաշարքի ավելորդ բառը:

- Կայծակ, ամպրոպ, տերև, փոթորիկ
- Դդում, տանձ, խնձոր, խաղող
- Հոկտեմբեր, մարտ, սեպտեմբեր, նոյեմբեր

Պատասխան՝ տերև, դդում, մարտ

5. Կռահի՛ր կենդանուն և նախադասության բացը լրացրո՛ւ:

Դաշտում ինջույքի ժամանակ Կոմիտասը մի օր լսում է և անմիջապես մի թղթի կտոր է վերցնում և սկսում է ձայնագրել. ապա հանդիմանում է կենդանուն, թե «Այ ապուշ, սխալ ես գրում, գռալ էլ չգիտես. . . »

Պատասխան՝ ավանակ

6. Գտի՛ր բանաստեղծության վերնագիրը և հեղինակին:

Ծառեր, թփեր, լեցուն միրգ
Մառան տարան գիրկ ու գիրկ,
Աշուն սնավ...

Պատասխան՝ Աշուն, Կոմիտաս

7. Կոմիտասյան երկու երգ խառնվել են: Ճի՛շտ դասավորիր ու գրի՛ր երգերի անվանումները:

Վարդավառը գալիս ա,
Գարնան սիրուն ծաղիկ ես,
Սոնա յար, Սոնա յար,
Հո՛յ Նազան իմ, Նազան իմ
Ծաղիկը ցնծալիս ա,
Ինձ համար աղունիկ ես,
Սոնա սիրուն, Սոնա յար:
Ջա՛ն, Նազան իմ, Նազան իմ:

8. Ի՞նչ ես կարծում Կոմիտասը իր աշակերտներին հաճախ կոչում էր.

Մորեխիկներ, Մողեսիկներ, թե՞ մրջյունիկներ: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

9. Գրի՛ր տրված արտահայտությունները մեկ բառով:

- Ծնկի բերել –
- Ձեռք բերել –
- Վիզը ծռել –
- Ձայնը կտրել –
- Ականջ դնել –
- Կրակի գին –

Պատասխան՝

*Ծնկի բերել-խեղճանալ
Ձեռք բերել-ճարել
Վիզը ծռել-խնդրել
Ձայնը կտրել-լռել
Ականջ դնել-լսել
Կրակի գին-թանկ*

10. Շարունակի՛ր և երեք-չորս նախադասությամբ ավարտի՛ր պատմությունը:

Կար-չկար մի ճամփորդ տերև կար. . .

Նոյեմբեր 2020

1. Գուշակի՛ր, թե ո՞ր ստեղծագործությունից են բառերը է և ո՞վ է հեղինակը:

Սով, մկստան, ջոջեր, ցեղակից, մռռան, ցեղ, զանգ, ծլնգոց, ճատճատան, ճառ, պոչ:

Պատասխան՝ Աթաբեկ Խնկոյան «Մկների ժողովը»

2. Բանաստեղծության տողերը խառնվել են, դասավորի՛ր.

Աքաղաղն ու կտուրը

Աթաբեկ Խնկոյան

Կարմրապեծիկ
Մի աքաղաղ
Երկար ու ձիգ
Իր ոտքերը
Կտրին տալով՝
Վեր-վեր ձգվեց,
Ի՞նչ հարց տվեց,
Ու զարմանքով. ..
- Ես զոռ տալիս,
Էս ո՞նց է, որ
Փուլ չի գալիս:
Էս կտուրը

Աքաղաղն ու կտուրը

Պատասխան՝

Աթաբեկ Խնկոյան

*Մի աքաղաղ
Կարմրապեծիկ
Իր ոտքերը
Երկար ու ձիգ
Կտրին տալով՝
Վեր-վեր ձգվեց,
Ու զարմանքով. .
Ի՞նչ հարց տվեց,
Էս ո՞նց է, որ
- Ես զոռ տալիս,*

Էս կտորը

Փուլ չի գալիս:

3. Տրված բառերին աջից կամ ձախից ավելացրո՛ւ մեկ տառ և ստացի՛ր նոր բառեր:

Երթ, անել, շուն, ստել, ութ, արագ, բարի, մուր:

Պատասխան՝ երթ - թերթ, հերթ, ...

Անել - ցանել, ...

Շուն – շունչ, աշուն,...

Ստել - նստել, ...

Ութ - թուր, ...

Արագ - կարագ, ...

Բարի - բարիք, ...

Մուր – մուրճ, ...

4. Առածներից որոշ բառեր «փախել են» են, փորձի՛ր գտնել և տեղադրել:

Շատ ————— , շատ բան կիմանաս:

Ինչ-որ ————— , այն կհնձես:

Լույսը կբացվի, ————— հետը:

Կարմիր ————— կաշին չի փոխի:

Հասկացողին ————— ասա, չհասկացողին՝ ————— :

Մի ————— գարուն չի գա:

Ով ————— , ոչ դալարի:

Պատասխան՝

Շատ լսես, շատ բան կհիմանաս:

Ինչ-որ ցանես, այն կհնձես:

Լույսը կբացվի, բարին հետը:

Կարմիր կովը կաշին չի փոխի:

Հասկացողին մեկ ասա, չհասկացողին՝

հազար ու մեկ:

Մի ծաղկով գարուն չի գա:

Ով ալարի, ոչ դալարի:

5. Այստեղ թաքնվել է մի «համեղ տոն», փորձի՛ր գուշակել:

- 1) Ի՞նչ կդառնա բանջարեղենը, եթե լցնենք աղաջրի մեջ:
- 2) ...-ը քար է ծակում:
- 3) Թումանյանի հեքիաթներից՝ «Սևուկ ...-ը»
- 4) Նարնջագույն է, նարինջ չէ,

Կլոր է, բայց ձմերուկ չէ,

Բանջարեղեն է, բայց գազար չէ:

- 5) Ի՞նչն է ջրում դաշտ ու անտառ՝

Լինի գարուն, աշուն, ամառ:

- 6) Գտի՛ր իմաստով մոտ բառ՝ երեկո կամ...

- 7) Ի՞նչ մտրակ է՝

Փայլում-շողում

Պոչը ամպում,

Ծայրը՝ հողում:

1.	■	■	■	■	■	□	□	■	■	■
2.	■	■	□	□	■	□	□	■	■	■
3.	■	■	■	■	■	□	□	□	□	■

4.										
5.										
6.										
7.										

Պատասխան՝ թթուդրիկ

1.					Թ	թ	ու			
2.			կ	ա	Թ	ի	լ			
3.					Ու	լ	ի	կ	ը	
4.					Դ	դ	ու	մ		
5.		ա	ն	ձ	Ը	և				
6.			ի	ր	Ի	կ	ու	ն		
7.					Կ	ա	յ	ծ	ա	կ

6. Օգտվելով բառաշարքից՝ «ծիծաղելի» բառեր կազմի՛ր:

- բզեզ թաթիկ
- ընձուղտ լուիկ
- տուն թթու

7. Միացնելով Ա և Բ շարքի բառերը՝ ստացի՛ր նոր բառեր:

- Ա. Բ.
- տերև հավաքել
- ծաղիկ փունջ
- բերք թափվել

Պատասխան՝ տերևահավաք, տերևաթափ, տերևափունջ

Ծաղկահավաք, ծաղկեփունջ, ծաղկաթափ

8. Ամեն անգամ մի տառ փոխելով՝ ստացի՛ր նոր բառ.

Մութ – թութ – թուր - ...

9. Շարունակի՛ր հորինուկը: Չմոռանա՛ս վերնագրել:

Մի անգամ լուրիկն ու ծաղկակաղամբը գնացին ճամփորդության: Գնացին, գնացին, մին էլ տեսան. . .

10. Արտասանի՛ր մի բանաստեղծություն աշնան մասին:

Տեսանյութ(ռադիոնյութ) պատրաստի՛ր մեծահասակների օգնությամբ, տեղադրի՛ր YouTube-ում և հղումը դի՛ր պատասխանի դաշտում:

Դեկտեմբեր 2020

1. Կռահի՛ր նկարելուկը՝ 1-ին նկարի՝ 1-ին, 2-րդ նկարի՝ 2-րդ, 3-րդ նկարի՝ 3-րդ, 4-րդ նկարի՝ 4-րդ, իսկ 5-րդ նկարի՝ 5-րդ հնչյունների օգնությամբ:



Պատասխան՝ փաթիլ

2. Լսի՛ր ամանորյա [էրգն](#) ու լրացրու պակասող բառերը:

Բասեն —, Բասեն —,

Հա՛յ —, ջա՛ն —,

Տղա՛, —, բոնե, —,

Հա՛յ —, ջա՛ն —, —:

*Պատասխան՝ Բասեն բարի, Բասեն բարի,
Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի,*

*Տղա՛, արի՛, բռնե՛, պարի՛,
Հա՛յ Նուբարի, ջա՛ն՛ Նուբարի, Նուբարի:*

3. Գուշակի՛ր հանելուկները:

Ձմռանը ամենուր եմ,
Ձեր սիրելի հյուրն եմ,
Մեծի համար պաղ եմ,
Մանուկների խաղ եմ:

Պատասխան՝ ձյուն

Ճերմակ է, շաքար չի,
Կարծր է, բայց քար չի,
Հենց տաքացավ, կհալչի:

Պատասխան՝ սառույց

4. Ձմռան մասին մի հանելուկ էլ դո՛ւ հորինիր

5. Բառերը թարս (աջից ձախ) կարդա՛ և գրի՛ր ստացված ամանորյա բարեմաղթանքները:

տառա իրատ, ըքրեք՝ իրար:

Պատասխան՝ Առատ տարի, բերքը՝ բարի:

ավոամա շուփ՝ ավոեմձ շուն:

Պատասխան՝ Ամառվա փուշ՝ ձմեռվա նուշ:

6. Տառերը խառնվել են, դասավորի՛ր և գրի՛ր բառերը. յուձն, դմբաենձ, թափլի, ուցրտ, սույռաց, կետդեմերբ, ոձցոեն

Պատասխան՝ ձյուն, ձնեմարդ, փաթիլ, ցուրտ, սառույց, դեկտեմբեր, ձեռնոց

7. Հովհաննես Թումանյանի «Առաջին ձյունը» բանաստեղծության տողերը ճիշտ հերթականությամբ դասավորի՛ր:

Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս,
Թիթեռ է գալի...
Ինչքան սպիտակ
Էսքան շատ թիթեռ

Բակն ու դուռը լի
Չեմ տեսել ես դեռ:

*Պատասխան՝ Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը լի
Ինչքան սպիտակ
Թիթեռ է գալի...
Էսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ:*

8. Նշի՛ր ձմռան ամիսները:

- Դեկտեմբեր
- Մայիս
- Հունվար
- Փետրվար

*Պատասխան՝
- Դեկտեմբեր
- Հունվար
- Փետրվար*

**9. Ընթերցի՛ր կամ բերանացի ասա ձմռան մասին քո սիրելի
բանաստեղծություններից որևէ մեկը: Խնդրի՛ր մեծահասակներից մեկին
տեսագրել քեզ, նյութը տեղադրի՛ր Youtube-ում և հղումն ուղարկի՛ր
պատասխանի փոխարեն:**

**10. Հորինի՛ր պատմություն՝ շարունակելով անավարտ միտքը: Չմոռանա՛ս նաև
վերնագրել:**

Մի անգամ երկնքից թափվող փաթիլը մոլորվեց ու. . . .

Հունվար 2021

1. Բառերը քանդվել են, կարո՞ղ ես հավաքել:

անուշ, ձյուն, ծառ, մարդ, ա, տոն, սահ, սա, նակ, ռույց, ձևե

Պատասխան՝ ձյունանուշ, տոնածառ, ձևեմարդ, սահնակ, սառույց

2. Բանաստեղծության տողերը խճճվել են, օգնի՛ր դասավորել:

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին,
Զգույժ իջի՛ր դաշտերին:

Պատասխան՝

*Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Զգույժ իջի՛ր դաշտերին:
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին,*

3. Մեկ բառ դարձրու .

- փոքրիկ մարդ -
- փոքրիկ աղջիկ -
- փոքրիկ տուն -
- փոքրիկ շուն -
- փոքրիկ թռչուն -

*Պատասխան՝ փոքրիկ մարդ - մարդուկ
փոքրիկ արջ - աղջնակ
փոքրիկ տուն - տնակ
փոքրիկ շուն - շնիկ
փոքրիկ թռչուն - թռչնակ*

4. Գուշակի՛ր հանելուկները:

Ա. Տրտից ծնված թիթեռ եմ,
Թե ջերմացնես, կհալչեմ:

Բ . Բազմած սառցե սահնակին՝

Տարին մեկ հյուր է գալիս,
Բերք ու բարիք շալակին՝
Բոլորիս տուն է գալիս:

Պատասխան՝ փաթիլ, Ձմեռ պսպ

5. Բանաստեղծության շարունակությունը Ձյունանուշը մոռացել է, օգնի՛ր նրան հիշել: Բանաստեղծությունը ներկայացո՛ւ տեսանյութի կամ ռադիոնյութի տեսքով:

Արի՛, արի՛

Ձմեռ պապի...

6. Գտի՛ր օրինաչափությունը և գրի՛ր կրկնվող բառը:

ձնագնդիկ

ձնեմարդ

ձյունանուշիկ

ձնաբուք

ձյունամրրիկ

Պատասխան՝ ձյուն

7. Ամեն անգամ նախորդ բառի մի տառը փոխելով՝ նոր բառեր ստացիր.

տառ - ... - ... - ...

8. Լրացրո՛ւ բաց թողնված բառը.

Ձյունանուշը է:

Ձմեռը է:

Քամին է:

Փաթիլները են:

9. Ի՞նչ կլիներ.

1) Եթե ձմռանը փաթիլների փոխարեն կոնֆետներ թափվեին երկնքից, . . .

2) Եթե փաթիլները գունավոր լինեին, . . .

3) Եթե Ձմեռ պապը նվերներ բաժանելու փոխարեն նվերներ վերցներ, . . .

10. Պատմի՛ր, թե ինչ պատահեց Ձմեռ պապիկին, երբ Ամանորի գիշերը

հանկարծակի անհետացավ նրա նվերների պարկը:

Փետրվար 2021

1. Գուշակի՛ր Հովհաննես Թումանյանի ո՞ր հեքիաթներից են այս հատվածները:

- 4) Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը՝ մարդուն, ու միշտ կռվելիս են լինում: Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:
- 5) Մերն աղջկանը գովելով ման է գալի. «Լիդրը գգոդ, լիդրը մանոդ, հա՛մ խճճոդ, հա՛մ խճուճը հանոդ, ձևոդ-կարոդ, հունցոդ-թխոդ, եփոդ-թափոդ, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները՝ ոսկի»:
- 6) Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս: Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի:

Պատասխան՝ Բարեկենդանը, Անբան Հուռին, Կիկոսի մահը

2. Հովհաննես Թումանյանի «Կռունկներ» բանաստեղծության տողերը ճիշտ հերթականությամբ դասավորի՛ր:

Եկավ գարուն մեր դռան:
 Կը՛ն կը՛ն, կըռկըռան.
 Կռունկների թևի տակ
 Կռունկները հա՛ թռան.

*Պատասխան՝
 Կը՛ն կը՛ն, կըռկըռան.
 Կռունկները հա՛ թռան.
 Կռունկները հա՛ թռան.
 Եկավ գարուն մեր դռան:*

3. Բառերը շրջվել են, կարդա՛ աջից ձախ և գրի՛ր թումանյանական հեքիաթների վերնագրերը:

ըսեվղա տաչոՊ, նիռուՀ նաբնԱ, սոնաՓ դրոխաՁ, ըկուձ դոսոԽ, ըտիԾ

Պատասխան՝ Պոչատ աղվեսը, Անբան Հուռին, Չախորդ Փանոս, Խոսող ձուկը, Միտը

4. Գրի՛ր մեկ բառով:

Սուտ ասել -
 կռիվ անել -
 կատակ անել -
 հարց տալ -
 մութն ընկնել -

Պատասխան՝ Ստել, կռվել, կատակել, հարցնել, մթնել:

5. Հորինի՛ր այնպիսի սուտ, որ ասենք սուտ է:

6. Ընտրի՛ր վերնագրերից մեկը և հորինի՛ր փոքրիկ պատմություն:

«Ձախորդ Հուռին», «Անխելք աքլորը», «Անհաղթ հիմարը»:

7. Վերնագրերից ո՞րը Հ. Թումանյանի ստեղծագործություններից չէ:

«Կանանչ ախպեր», «Պույ-պույ մկնիկը», «Մուկիկի մահը», «Իրիկուն», «Արագիլը»:

Պատասխան՝ Պույ-պույ մկնիկը

8. Բառերն առանձնացրո՛ւ և կարդա ասացվածքները:

Սուտասողիտունը կրակը նկավ չհավատացին:

Գյուղը որ կանգնի, գերան կկոտրի:

Պատասխան՝

Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չհավատացին:

Գյուղը որ կանգնի, գերան կկոտրի:

9. Գիտե՞ս, որ փետրվարի 19-ին Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է: Այդ առիթով շնորհավորի՛ր նրան: Այս տարի նրա 152 ամյակն է:

10. Ընթերցի՛ր կամ բերանացի ասա՛ Հովհաննես Թումանյանի քո սիրելի բանաստեղծություններից որևէ մեկը: Խնդրի՛ր մեծահասակներից մեկին տեսագրել քեզ, նյութը տեղադրի՛ր Youtube-ում և հղումն ուղարկի՛ր պատասխանի փոխարեն:

Մարտ 2021

1. Լուծի՛ր խաչբառը և ներկված հատվածում կկարդաս սիրելի անվանում:

		1.			
	2.				
3.					
	4.				
5.					
6.					

1) «Ա՛խ, էսպես էլ գիժ ամիս,

Մարդու հանգիստ չի տալիս»:

2) Ո՛չ ամառ է, ո՛չ ձմեռ է, և ո՛չ էլ աշուն է:

3) Պապիկ-տատիկ, հայրիկ-մայրիկ, եղբայր-...

- 4) Արփի-արեգակ-....:
- 5) Տարին ունի 12:
- 6) «Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը՝ ...»:

Պատասխան՝ մարտ, գարուն, քույրիկ, արև, ամիս, Կիկոս, մայրիկ:

		1.մ	ա	ր	տ
	2. գ	ա	ր	ու	ն
3.ք	ու	յ	ր	ի	կ
	4.ա	ր	և		
5.ա	մ	ի	ս		
6.Կ	ի	կ	ո	ս	

2. Գտի՛ր կրկնվող բառը:

- մայրական
- մայրենի
- մայրություն
- մայրիկ
- մայրաքաղաք

Պատասխան՝ մայր

- 3. Հորինի՛ր փոքրիկ պատմություն, թե ինչից է պատրաստված մայրիկը:
- 4. Լրացրո՛ւ քեզ ծանոթ բանաստեղծության բաց թողնված բառերը:

- Ա՛յս, էսպես էլ ամիս
- Մարդու չի տալիս:
- Էսօր ... օր կանի,
- Վաղը՝ ու քամի:
- Առավոտը օդ;
- Կեսօրին ու ամպոս:

Պատասխան՝ գիժ, հանգիստ, ուրախ, անձրև, պայծառ,, մութ:

5. Յուրաքանչյուր շարքից ընտրի՛ր մեկական բառ և կազմի՛ր նոր բառ:

ձյուն	հոտ
մայրիկ	ծաղիկ
անուշ	թերթ
ծաղիկ	տոն
բազում	էրանգ

Պատասխան՝ ձնծաղիկ, մայրիկատոն, անուշահոտ, ծաղկաթերթ, բազմերանգ:

6. Շարունակի՛ր ՝ ի՞նչ կլինեն, եթե:

Ի՞նչ կլինեն, եթե ծաղիկները ծաղկեին հողի տակ:

Ի՞նչ կլինեն, եթե միշտ գարուն լիներ:

7. Թումանյանական բանաստեղծությունների խառնաշփոթ է: Օգնի՛ր տողերը դասավորել ըստ հերթականության և նշի՛ր բանաստեղծությունների վերնագրերը:

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ,
Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ,
Առատ ու անփույթ,
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ,
Կեղևը՝ կապույտ:
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում:

Պատասխան՝ «Ամենից լավ տունը», «Թռչունի մտածմունքը»:

*Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ,
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ,
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում:*

*Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ,
Առատ ու անփույթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը՝ կապույտ:*


8. Տրված վանկերին այնպիսի վանկեր ավելացրո՛ւ, որ բառեր ստանաս: Գրի՛ր այդ բառերը:

-նըր, -գըր, -տըղ, -կըղ:

Պատասխան՝ սանր, վագր, աստղ, արկղ:

9. Մայրիկների տոնի առթիվ արտասանի՛ր քո սիրելի բանաստեղծությունը կամ երգի՛ր քո սիրելի երգը զարնան մասին և նվիրի՛ր մայրիկիդ: Պատրաստի՛ր տեսանյութ, հրապարակիր You Tube –ում, հղումն ուղարկի՛ր:

10. Վերնագրի՛ր նկարը: Ո՞ր հեքիաթն է հիշեցնում: Կռահեցի՞ր, գրի՛ր՝ ով է հեղինակը:



Պատասխան՝ Հովհաննես Թումանյան «Մուկիկի մահը»

Ապրիլ 2021

1. Ամեն անգամ նախորդ բառի մի տառը փոխելով՝ ստացի՛ր:

ա) ձի-ից՝ լու, բ) տառ-ից՝ նուռ, գ) հող-ից՝ փիղ, դ) կով-ից՝ նավ:

2. Գտի՛ր «թաքնված» ասացվածքները:

ա) Ուշլինինուշլինի: բ) Դուքեզմիզովիրթողուրիշըզովի:

Պատասխան՝ ա) Ուշ լինի նուշ լինի:

բ) Դու քեզ մի գովիր թող ուրիշը գովի:

3. Ո՞ր շարքում են կենդանիները դասավորված «Ոհմակ, պարս, նախիր, երամակ, վտառ» խմբին համապատասխան:

Ա. գայլ, մեղու, ձի, կով, ձուկ:

Բ. գայլ, մեղու, կով, ձի, ձուկ

Գ. մեղու, կով, ձի, գայլ, ձուկ

Դ. մեղու, գայլ, ձուկ, կով, ձի

Պատասխան՝ Բ. գայլ, մեղու, կով, ձի, ձուկ

4. Գտի՛ր քեզ ծանոթ տողերի կորած բառը և լրացրո՛ւ կետերի փոխարեն:

Պզզան, պզզան, պզպզան, պստիկ . . . տզտզան:

Մի . . . կարմրապեծիկ, իր ոտները երկար ու ձիգ:

. . . դուրս է եկել պսպղալով:

. . . , . . . , իմ կաթնատամ, գնա՛ս բարով, հարյուր տարով:

Պատասխան՝ մեղուն, աքաղաղ, արեգակը, ատամ

5. Աջից կամ ձախից հանի՛ր մեկ տառ և ստացի՛ր նոր բառեր:

Նվարդ, կուժ, որդի, աշուն, ժավել

Պատասխան՝ վարդ, ուժ, որդ, շուն, ավել

6. Մեկ բառով գրի՛ր:

Ոսկուց պատրաստված-

Քարից պատրաստված-

Երկաթից պատրաստված-

Արծաթից պատրաստված-

Փայտից պատրաստված-

Պատասխան՝ ոսկե, քարե, երկաթե, արծաթե, փայտե

7. Կարդա՛ Ջ. Ռոդարիի «Այ քեզ շաբաթ» բանաստեղծությունը: Փոխի՛ր ընդգծված բառերն այնպես, որ ծույլը դառնա աշխատասեր:

Արթնացա երկուշաբթի,
Հորանջեցի երեքշաբթի,
Չորեքշաբթի անուշ-անուշ ձգվեցի,
Հինգշաբթի կրկին քնեցի:
Քնեցի ուրբաթ, շաբաթ
Ու գործի չգնացի՝
Կորչի գործը- ասացի:
Լավ էր՝ արդեն կիրակի
Ամբողջ օրը քնեցի:

8. Չարաճճի բառերի տառերը խառնվել են, դասավորի՛ր այնպես, որ կարդաս բառը:
տիզակ, դմուե, ճճնա, ջմուրյն, ոթիեթ

Պատասխան՝ գատիկ, մեղու, ճանճ, մրջյուն, թիթեռ

9. Շարունակի՛ր հորինել:

Մի անգամ շուտասելուկը դուրս թռավ գրքից և ընկավ. . .

10. Փորձի՛ր արագ կարդալ հետևյալ շուտասելուկները: Ձայնագրի՛ր կամ տեսանկարահան՛իր քեզ, տեղադրի՛ր հղումը: Կարող ես ինքդ ընտրել շուտասելուկ համացանցից: Խաղին կարող են մասնակցել նաև ընտանիքիդ անդամները:

Բուռ-բուռ այլուր շաղեցինք,
Փուռը տարանք եփեցինք,
Փռապանը համեմեց,
Բուռ-բուռ ցորեն նվիրեց:

Շահը շահին ասաց՝ շահ,
Կլինի՞ շահը անշահ:
Շահը՝ անշահ, շահն ասաց,
Թե անշահ է՝ էլ ի՞նչ շահ:

Ծտի ճուտը՝ ճմբան ծերին, ծտի ճտի ճիտը՝ ծուռ:

Սարի ուսին սիրուն լուսին, սիրուն լուսին սարի ուսին:

Մայիս 2021

1. Տառերը խառնվել են, դասավորի՛ր և գրի՛ր բառերը. ճիկավ, կիծաղ, սիյամ, բուզան, դիծած,

Պատասխան՝ Վիճակ, ծաղիկ, մայիս, գարուն, ծիծաղ

2. Տրված բառերից առանձնացրո՛ւ մեկ բառ, որին առջևից ավելացնես «Գ» տառը կդառնա բնակավայր, «Շ» տառը ավելացնես, կդառնա տատիկի ձեռքի գործիք, իսկ եթե «Ճ» տառը ավելացնես՝ կդառնա ծառի մաս:
ավան, կատու, տատիկ, կոշիկ, յուղ, մածուն

Պատասխան՝ շյուղ, ճյուղ, գյուղ

3. Մայիսին նշվում է Համբարձման տոնը: Ուրիշ ինչպե՞ս են անվանում այդ տոնը:

Պատասխան՝ Ջան գյուլում, վիճակ

4. Ղ.Աղայանի բանաստեղծության մեջ բառերը խառնվել են, դասավորի՛ր և նշի՛ր՝ ո՞ր բանաստեղծությունից է հատվածը:

Մարտը տալիս է մանուշակ,
Ապրիլը՝ կապույտ ձնծաղիկ,
Մայիսին երգում է վարդը,
Սոխակը բացվում անուշակ:

Պատասխան՝ Ամիսներ և չորս եղանակ

*Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:*

5. Ծաղկանունները դասավորի՛ր այբբենական կարգով: Արևածաղիկ, ձնծաղիկ, յասաման, մանուշակ, կակաչ, հասմիկ, զանգակ, շուշան, վարդ, նարգիզ:

Պատասխան՝ Արևածաղիկ, զանգակ, կակաչ, հասմիկ, մանուշակ, յասաման, նարգիզ, շուշան, վարդ

6. Շարունակի՛ր պատմությունը: Դաշտերում՝ ուր ապրում էին գույզգույն ծաղիկները, որտեղ ծաղկից ծաղիկ էին թռչում ժրաջան մեղունները, բոլոր ծաղիկներն իրար նման էին: Բայց մի ծաղիկ կար, որը տարբերվում էր մյուսներից:
Նա. . .

7. Հնում հավատում էին, որ տարին մեկ անգամ, Համբարձման գիշերը, հենց դրանք էին գալիս ու միանում իրար, ողջագուրվում ու հեռանում: Լրացրո՛ւ խաչքառը և դեղինով ներկված տողը կարդալով կիմանաս, թե ինչե՞րն էին:

- 1) Համբարձման ծեսին նախորդող ամսանունն էր. . . ,
- 2) Ճամփորդները հեքիաթում կտուրը բարձրանալուց հետո ի՞նչն էր խանգարում արևը, որ տեսներ, թե աշխարհում ի՞նչ կար, ի՞նչ չկար/պատասխան. սար/
- 3) Հիշում ես, թե ի՞նչն էր շինել Վարպետ Օհանը:
- 4) Քո սիրելի երգերից մեկի՝ «Արև, արև, ե՛կ, ե՛կ » երգի հեղինակի ազգանունը Աղայան է, իսկ անո՞ւնը:
- 5) Երբ աչքերդ փակում ես և խոր քունը մտնում, ի՞նչ ես տեսնում:
- 6) Այդ ինչե՞րն են, որ իրար միանալով ժամերն են դառնում:

Պատասխան՝

Ա	Պ	Բ	Ի	Լ		
Ս	Ա	Բ				
Տ	Ու	Ն				
Ղ	Ա	Զ	Ա	Բ	Ո	Ս
Ե	Բ	Ա	Զ			
Բ	Ո	Պ	Ե	Ն	Ե	Բ

Հունիս 2021

1. Այբբենական կարգով դասավորելու ուղեքում, ո՞ր թռչունը կլինի չորրորդը:

Ագռավ, լոր, կաքավ, սագ, հավ, բազե, ճնճղուկ:

Պատասխան՝ կաքավ

2. Բառերն առանձնացրո՛ւ և նախադասությունները մուտքագրի՛ր:

Ագռավի ճուտը իր մոր համար քաղցր է:

Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է:

Գիտուն աղվեսը երկու տարով է թակարդ ընկնում:

Պատասխան՝

Ագռավի ճուտը իր մոր համար քաղցր է:

Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է:

Գիտուն աղվեսը երկու տարով է թակարդ ընկնում:

3. Գուշակի՛ր հանելուկը .

Ուրիշի բնում նա ձու է դնում,
Ոչ թուխս է նստում, ոչ էլ ճուտ հանում,
Մրան-նրան է ձվերը թողնում
Ի՞նչ թռչուն է նա, ինչպե՞ս են կոչում:

Պատասխան՝ կկու

4. Ի՞նչ թռչուններ են «թաքնված» տրված բառերում:

Կարապետ, սալոր, բուրդ, Կաքավասար, Ծիծեռնակաբերդ:

Պատասխան՝ կարապ, լոր, բու, կաքավ, ծիծեռնակ

5. Ի՞նչն է կամ ո՞վ է աշխարհում ամենածիծաղելին, շարունակի՛ր:

Աշխարհում ամենածիծաղելին . . .

6. Լսի՛ր «[Կաքավիկ երգը](#)» և մուտքագրի՛ր բաց թողնված բառերը:

Արև բացվեց թուխ ամպերեն,

. . . թըռավ կանաչ սարեն,

Կանաչ սարեն՝ սարի ծերեն,

. . . բերավ ծաղիկներեն:

Քո բուն հյուսած ծաղիկներով

Շուշան, . . . , նունուֆարով,
Քո տեղ լրցված ցող ու շաղով,
Քրնես-կելնես . . . ու տաղով:

Քո թև փափուկ ու . . . ,
Պստիկ կտուց, կարմիր . . . :
Կարմիր, . . . տոտիկներով,
Կշորորաս ճուտիկներով:

Պատասխան՝ կաքավ, բարև, նարգիզ, երգ, խատուտիկ, կարմիր

7. Ընտրի՛ր Կոմիտասի երգերից ամենասիրելին և երգի՛ր: Ընտանիքի անդամների օգնությամբ ձայնագրի՛ր կամ տեսագրի՛ր այն, տեղադրիր Youtube-ում և հղումն ուղարկի՛ր պատասխանի փոխարեն:

Օգոստոս 2021

Կարդա՛ Աստրիդ Լինդգրենի «[Մանչուկն ու Կառլսոնը](#)» կամ լսի՛ր [աուդիոտարբերակը](#) և պատասխանի՛ր հարցերին:

1. Ո՞վ էր ստեղծագործության հեղինակը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:
- Ջաննի Ռոդարին
 - Աստրիդ Լինդգրենը
 - Ղազարոս Աղայանը

Պատասխան՝ Աստրիդ Լինդգրենը

2. Ո՞ր քաղաքում էր ապրում Մանչուկը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:
- Երևանում
 - Մոսկվայում
 - Ստոկհոլմում

Պատասխան՝ Ստոկհոլմում

3. Որտե՞ղ էր գտնվում Կառլսոնի տնակը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- առանձնատան բակում
- շենքի տանիքում
- գյուղում

Պատասխան՝ շենքի տանիքում

4. Քանի՞ մոմ կար Մանչուկի ծննդյան տոբոթի վրա: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- ութ
- յոթ
- վեց

Պատասխան՝ ութ

5. Ովքե՞ր էին Մանչուկի քույրն ու եղբայրը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- Գունիլլան ու Քրիստերը
- Հենզելն ու Գրետելը
- Բոսսեն ու Բետանը

Պատասխան՝ Բոսսեն ու Բետանը

6. Պատմի՛ր քո ծննդյան տարեդարձին ստացած ամենահետաքրքիր նվերի մասին:

7. Պատմի՛ր ընկերոջդ մասին, նրա հետ անցկացրած հետաքրքիր ժամանակի մասին: Ի՞նչ խաղեր եք սիրում խաղալ միասին: Պատրաստի՛ր փոքրիկ տեսանյութ և YouTube-յան հղումը տեղադրի՛ր: